ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2006 թվականի նոյեմբերի 27-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 4. Օրենքի խնդիրները

1. Օրենքի խնդիրներն են՝

1) ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների պահպանմանը և ավելացմանն ուղղված միջոցառումների սահմանումը, ջրային համակարգերի դասակարգումը, պետական նշանակության ջրային համակարգերի որոշման չափանիշների և այդ համակարգերի ցանկի սահմանումը.

2) ջրօգտագործման վճարի առավելագույն և նվազագույն չափերի, ներառյալ՝ ջրային ռեսուրսների արդյունահանման, վերադարձման և բնապահպանական վճարների դրույքաչափերի սահմանումը.

3) ջրերի նկատմամբ առաջարկի և պահանջարկի գնահատումը.

4) ջրային ռեսուրսների ամբարման, բաշխման և օգտագործման ռազմավարության սահմանումը.

5) Ջրի ազգային ծրագրի կատարումն ապահովող իրավական ակտերի ընդունման ու կատարման, դրանց կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների, ինչպես նաև պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող գործողությունների համակարգմանն ուղղված միջոցառումների սահմանումը.

6) ջրային նորմերի մշակմանը, էկոլոգիական թողքերի մեծությունների և ջրերի անվերադարձ վերցման սահմանային թույլատրելի ծավալների ճշգրտմանը, հատուկ պահպանվող ավազանային տարածքների կամ դրանց որևէ մասի ցանկի, ջրային ավազաններում արտակարգ էկոլոգիական իրավիճակների և էկոլոգիական աղետների գոտիների մշակմանը, ջրաէկոհամակարգերի վրա վնասակար ազդեցությունների կանխմանն ու ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավման և աղտոտման կանխարգելմանն ուղղված միջոցառումների սահմանումը.

7) Ջրի ազգային ծրագրում ընդգրկված միջոցառումների նկարագրի, ծավալների, դրանց իրականացման համար պատասխանատու մարմինների և ժամանակացույցի սահմանումը.

8) Ջրի ազգային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական պահանջների և ֆինանսավորման առաջարկվող աղբյուրների սահմանումը.

9) հասարակության իրազեկության ապահովումը:

2. «Ջրի ազգային ծրագրի խնդիրներն իրականացնելու համար սահմանվում են կարճաժամկետ (մինչև 2020 թվական), միջնաժամկետ (2020-2025 թվականներ) և երկարաժամկետ (2025-2030 թվականներ) միջոցառումների ծրագրերը: Միջոցառումների ծրագրերը մշակվում և հաստատվում են կառավարության կողմից:

Deleted: 2. Ջրի ազգային ծրագրի խնդիրներն իրականացնելու համար սահմանվում են կարճաժամկետ (մինչև 2010թ.) ծրագրեր, որոնք ներկայացված են Հավելվածում: Միջնաժամկետ (2010-2015թթ.) և երկարաժամկետ (2015-2021թթ.) միջոցառումների ծրագրերը մշակվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից և ներկայացվում են քննարկման Ջրի ազգային ծրագրի թարմացման ժամանակ:

~~**Հոդված 33. Ջրի ազգային ծրագրի իրականացման կարճաժամկետ միջոցառումներ**~~

~~1. Ջրի ազգային ծրագրի կարճաժամկետ միջոցառումների իրականացումը նախատեսվել է մինչև 2010 թվականը և ներառում է ջրային ռեսուրսների և համակարգերի արդյունավետ կառավարման և պահպանության ապահովման նպատակով 29 միջոցառումներ:~~

~~2. Ջրի ազգային ծրագրի կարճաժամկետ միջոցառումների ներկայացվումենսությունօրենքի Հավելված, որի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ երկարաժամկետ ծախսային ծրագրերը՝ երկնեալովտվյալ տարվա միջնաժամկետ ծախսային ծրագրերի բյուջետային հայտերի քննարկման արդյունքներից:~~

Հոդված 34. Ջրի ազգային ծրագրի իրականացման և թարմացման գործընթացը

1. Սույն օրենքով սահմանված կարգով միջոցառումների իրականացման մասին պատասխանատու պետական լիազոր մարմինները մինչև կարճաժամկետ, երկարաժամկետ և միջնաժամկետ միջոցառումների համար սահմանված ժամկետի ավարտման տարվա դեկտեմբերի 20-ը կառավարություն են ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ առաջարկություններ Ջրի ազգային ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

2. Միջոցառումների կատարման համար պատասխանատու մարմինների կողմից ներկայացվող հաշվետվությունը ներառում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի (ավարտված և ընթացքում գտնվող), պատասխանատու կատարողի, օգտագործված ֆինանսական միջոցների, ինչպես նաև չավարտված և չկատարված միջոցառումների հիմնավորման վերաբերյալ:

Deleted: 1. Սույն օրենքով սահմանված կարգով միջոցառումների իրականացման մասին պատասխանատու պետական լիազոր մարմինները մինչև յուրաքանչյուր տարվան հաջորդող տարվա մարտի 25-ը Հայաստանի Հանրապետության կառավարություն են ներկայացնում յուրաքանչյուր տարվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ առաջարկություններ Ջրի ազգային ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության կառավարությունը լիազոր մարմնի մշակած հաշվետվությունների և Ջրի ազգային խորհրդի ներկայացրած առաջարկությունների հիման վրա մինչև տվյալ տարվա մայիսի 15-ը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացնում ամենամյա հաղորդում՝ տվյալ տարվա միջոցառումների կատարման, ինչպես նաև Ջրի ազգային ծրագրում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ:¶

Formatted: Justified